

րիններու լուծմաներով, որովհետեւ այն վայրկեանէն սկսեալ երբ ժողովուրդ մը դադրի գոհելէ իրեններուն համար, ան կը դադրի գոյութիւն ունենալէ:

Ուրեմն եթէ Հրեաներ հազարաւոր տարիներէ ի վեր Աստուծոյ կու տան իրենց եկամուտին տասանորդը, հետեւաբար Հայր Աստուած կ'ականկալէ, որ Քրիստոնեաներ եւս ետ չմնան անոնցմէ: Սակայն այն ինչ որ պիտի տանք Աստուծոյ, պէտք չէ ըլլայ մեքենական պարտականութիւն մը կատարողի ստիպողականութեամբ, այլ ընդհակառակը՝ պարտինք այդ ընել սիրով ու պատրաստակամութեամբ: Քրիստոս պախարակեց Փարիսեցին որ կու տար, որպէսզի մարդիկ հիանային իր վրայ, սակայն գնահատեց Աղքատ Այրիին տուած չնչին գումարը, անոր տալու ձեւին համար, որովհետեւ ան տուաւ սիրտով, իր ամբողջ ունեցածը տուաւ: Եթէ մենք իսկապէս կը սիրենք զԱստուած և իր եկեղեցին, մանաւանդ մարդկային մեծ կարիքի այս օրերուն, պէտք է տալ ինչ որ կրնանք, մենք բացարձակապէս իրաւունք չունինք Աստուծոյ հետ վարուելու ցնցոտիներ հաւաքող մարդուն նման, տալով միայն մեր աւելցուքէն, այլ պարտինք տալ շուայլօրէն, ուրախութեամբ և սիրով:

Երիտասարդուհի մը, ժամանակին հինգ տարիներ միսիոնարական հաստատութեան մը մէջ ծառայելէ ետք, Ծննդեան գիշերը կը միանայ իր հարուստ ընտանիքին: Իր եղբայրն ու քոյրը երբ իրենց ծնողներուն կու տան թանկարժէք նուէրներ, այս խեղճ աղջիկը յուզուած կ'ըսէ. «Ես նախընտրեցի համեստ պայմաններով ապրիլ, դրամ չունիմ ձեզի սուղ նուէրներ գնելու, բայց փոքրիկ նուէր մը ունիմ», ու ան պարզ տուի մը բանալով մէջէն կը հանէ ձեռագործ, կարմիր բուրդով աշխատցուած սիրտ մը, փաթթուած դեղին ժապաւէնով, և կ'ըսէ ծնողներուն. «Ամբողջ ունեցածս, սիրտս ձեզի կու տամ»:

Մենք եւս նման այդ պարմանուհիին պարտինք ըսել. «Իմ Երկնաւոր Հօրս կու տամ բոլոր ունեցածս՝ Սիրտս»:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ան, որ բարիին հասկցողութիւնը չունի, ամէն ինչ վնասակար է իրեն:

Եթէ նկարիչ ըլլայի բարեգործութիւնը կը նկարէի քօղը դէմքին՝ իբրեւ ամօթխածութիւն, մատը շրթունքին՝ իբրեւ լուծիւն, իսկ երախտագիտութիւնը փողը բերնին՝ իբրեւ համբաւ:

Կեանքը առանց արուեստի, ամայութեան մէջ և անհունին դէմ ցցուած խարակն է, որուն կու գան զարնուիլ տգիտութեան և անճաշակութեան կոհակները:

Կեանք և արուեստ իրար ամբողջացնող երկու եզրեր են, այնքան մտերիմ իրարու, որ առանց մէկուն կարելի չէ ըմբռնել միւսը: Այս երկուքին համագործութեամբ է միայն, որ կարելի կ'ըլլայ կատարելագործել մարդուն գոյութեան իմաստն ու ձգտումը: